

Սույն փաստաթուղթը միայն տեղեկատվական գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

► **B** Որոշ հեղուկ վառելիքներում ծծմբի կոնցենտրացիայի նվազեցման մասին և 93/12/ԵՏՀ հրահանգները փոփոխող՝ ԽՈՐՀՐԴԻ 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/32/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

(ՊՏ L 121, 11.05.1999թ., էջ 13)

Փոփոխված՝

**Պաշտոնական տեղեկագիր**

		<b>թիվ</b>	<b>էջ</b>	<b>ամսաթիվ</b>
<b>M1</b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թ. սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով	L 284	1	31.10.2003թ.
► <b>M2</b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի 2005/33/ԵՀ հրահանգով	L 191	59	22.07.2005թ.
► <b>M3</b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի մարտի 11-ի թիվ 219/2009 (ԵՀ) կանոնակարգով	L 87	109	31.03.2009թ.
► <b>M4</b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդարանի՝ Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/30/ԵՀ հրահանգով	L 140	88	05.06.2009թ.

▼B

**Որոշ հեղուկ վառելիքներում ծծմբի կոնցենտրացիայի նվազեցման մասին և  
93/12/ԵՏՀ հրահանգները փոփոխող՝ ԽՈՐՀՐԴԻ 1999 թվականի ապրիլի 26-ի  
1999/32/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,  
մասնավորապես, դրա 95(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 189գ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն (3),

- 1) քանի որ Համայնքի բնապահպանական քաղաքականության նպատակները և սկզբունքները, որոնք ներկայացված են շրջակա միջավայրի վերաբերյալ գործողությունների ծրագրերում և, մասնավորապես, Պայմանագրի 130ժը հոդվածի սկզբունքների հիման վրա կազմված շրջակա միջավայրի վերաբերյալ գործողությունների 5-րդ ծրագրում (4), նպատակ ունեն, մասնավորապես, ապահովելու մարդկանց պաշտպանությունը ծծմբի երկօքսիդի արտանետումների հայտնի ռիսկերից ու պաշտպանելու շրջակա միջավայրը՝ կանխելով ծծմբի կուտակումը վտանգավոր քանակությամբ և մակարդակով,
- 2) քանի որ Պայմանագրի 129-րդ հոդվածով սահմանվում է, որ առողջության պահպանման պահանջները պետք է կազմեն Համայնքի քաղաքականության բաղկացուցիչ մասը, և քանի որ Պայմանագրի 3(Ժե) հոդվածով նաև սահմանվում է, որ Համայնքի գործունեությունը պետք է նպաստի առողջության պահպանման բարձր մակարդակի հաստատմանը,
- 3) քանի որ ծծմբի երկօքսիդի արտանետումները նպաստում են Համայնքի տարածքում թթվեցման խնդրի առաջացմանը, և քանի որ ծծմբի երկօքսիդը նաև անմիջական ազդեցություն ունի մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա,

- 4) քանի որ թթվեցումը և մթնոլորտային ծծմբի երկօքսիդը վնաս են հասցնում ոչ կայուն էկոհամակարգերին, նվազեցնում են կենսաբազմազանությունը և գեղագիտական արժեքը, ինչպես նաև բացասաբար ազդում հացահատիկի արտադրության ու անտառների աճի վրա. քանի որ քաղաքներում տեղացող թթու անձրևները կարող են մեծ վնաս հասցնել շինություններին և ճարտարապետական ժառանգությանը, և քանի որ մթնոլորտի աղտոտումը ծծմբի երկօքսիդով կարող է նաև մեծ վնաս հասցնել մարդու առողջությանը, մասնավորապես, բնակչության՝ շնչառական հիվանդություններով տառապող հատվածի շրջանում,
- 5) քանի որ թթվեցումը անդրսահմանային երևույթ է և պահանջվում են լուծումներ՝ Համայնքի, ինչպես նաև ազգային կամ տեղական մակարդակով,
- 6) քանի որ ծծմբի երկօքսիդի արտանետումները նպաստում են մթնոլորտում պինդ մասնիկների գոյացմանը,
- 7) քանի որ Համայնքը և առանձին անդամ պետություններ ՄԱԿ-ի՝ Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ) «Օդի աղտոտիչների մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային տեղափոխության մասին» կոնվենցիայի պայմանավորվող կողմեր են. քանի որ «Ծծմբի երկօքսիդով մթնոլորտի անդրսահմանային աղտոտման մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ արձանագրությամբ նախատեսվում է, որ պայմանավորվող կողմերը պետք է կրճատեն ծծմբի երկօքսիդի արտանետումները 30%-ով կամ ավելին՝ համաձայն առաջին արձանագրության, և քանի որ ՄԱԿ-ԵՏՀ երկրորդ արձանագրությունը հիմնված է այն պայմանի վրա, որ վտանգավոր քանակության և մակարդակի ցուցանիշները կշարունակվեն գերազանցվել էկոլոգիապես խոցելի որոշ տարածքներում. քանի որ կպահանջվեն ծծմբի երկօքսիդի արտանետումների նվազեցման հետագա միջոցառումներ, եթե անհրաժեշտ է հաշվի առնել շրջակա միջավայրի վերաբերյալ 5-րդ գործողությունների ծրագրի նպատակները, և քանի որ պայմանավորվող կողմերը պետք է, հետևաբար, շարունակեն էականորեն նվազեցնել ծծմբի երկօքսիդի արտանետումները,
- 8) քանի որ ծծումբը, որը փոքր քանակությամբ պարունակվում է նավթի և քարածխի մեջ, տասնամյակներ շարունակ ճանաչվել է թթու անձրևների և քաղաքային ու

արդյունաբերական շատ տարածքներում օդի աղտոտման հիմնական պատճառներից մեկի՝ ծծմբի երկօքսիդի արտանետումների հիմնական աղբյուր,

- 9) քանի որ Հանձնաժողովը վերջերս Համայնքի տարածքում թթվեցման դեմ պայքարի տնտեսապես արդյունավետ ռազմավարության մասին հաղորդագրություն է հրապարակել. քանի որ որոշ վառելիքների այրումից առաջացող ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկումը ճանաչվել է տնտեսապես արդյունավետ այս ռազմավարության բաղկացուցիչ մասը. և քանի որ Համայնքն ընդունում է մնացած բոլոր վառելիքների մասով միջոցների անհրաժեշտությունը,
- 10) քանի որ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վառելիքում ծծմբի կոնցենտրացիայի նվազեցման միջոցով ծծմբի երկօքսիդի արտանետումների կրճատման օգուտներն արդյունաբերության համար հաճախ զգալիորեն ավելի մեծ կլինեն, քան ծախսերը, և քանի որ կան տեխնոլոգիաներ, որոնք նախատեսված են հեղուկ վառելիքներում՝ ծծմբի մակարդակը նվազեցնելու համար,
- 11) քանի որ Պայմանագրի 3(բ) կետով սահմանված սուբսիդիարության և համաչափության սկզբունքների համաձայն՝ որոշ վառելիքների այրումից առաջացող ծծմբի երկօքսիդի արտանետումները նվազեցնելու նպատակը չի կարող արդյունավետորեն իրագործվել առանձին անդամ պետությունների կողմից. քանի որ չհամաձայնեցված գործողությունները չեն կարող ցանկալի նպատակին հասնելու երաշխիք լինել, անարդյունավետ են և կարող են զգալի անորոշություն առաջացնել ազդեցություն կրող վառելիքային շուկայում. քանի որ, հաշվի առնելով Համայնքի ամբողջ տարածքում ծծմբի երկօքսիդի արտանետումների նվազեցման անհրաժեշտությունը, առավել արդյունավետ է գործողություններ ձեռնարկել Համայնքի մակարդակով. և քանի որ սույն Հրահանգը սահմանափակվում է ցանկալի նպատակին հասնելու համար անհրաժեշտ նվազագույն պահանջներով,
- 12) քանի որ «Որոշ վառելիքներում ծծմբի կոնցենտրացիայի մասին» Խորհրդի 1993 թվականի մարտի 23-ի 93/12/ԵՏՀ հրահանգում Հանձնաժողովին խնդրել էին առաջարկ ներկայացնել Խորհուրդ, որով սահմանվում են նավթաթորվածքում ծծմբի ավելի ցածր սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ, իսկ ավիացիոն կերոսինի համար՝ նոր սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ. քանի որ

նպատակահարմար կլինի սահմանելու այլ հեղուկ վառելիքներում, մասնավորապես՝ մազութում, նավերում օգտագործվող մազութում, նավերում օգտագործվող և այլ նավթաթորվածքներում ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ՝ հիմնվելով ծախսերի արդյունավետության ուսումնասիրությունների վրա,

- 13) քանի որ, համաձայն Պայմանագրի 130-րդ հոդվածի, սույն Հրահանգը չպետք է խոչընդոտի որևէ անդամ պետության՝ պահպանել կամ ընդունել առավել խիստ պաշտպանիչ միջոցներ, և քանի որ նման միջոցները պետք է համատեղելի լինեն Պայմանագրի հետ ու դրանց մասին անհրաժեշտ է տեղեկացնել Հանձնաժողովին,
- 14) քանի որ ցանկացած անդամ պետություն նոր, առավել պաշտպանիչ միջոցներ ձեռնարկելուց առաջ պետք է միջոցների նախագիծը ներկայացնի Հանձնաժողով՝ համաձայն տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի ոլորտում տեղեկատվության տրամադրման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1983 թվականի մարտի 28-ի 83/189/ԵՏՀ հրահանգի,
- 15) քանի որ, հաշվի առնելով մազութում ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, նպատակահարմար է շեղումներ սահմանել այն անդամ պետությունների և տարածաշրջանների համար, որտեղ դա հնարավոր է՝ ելնելով բնապահպանական պայմաններից,
- 16) քանի որ, հաշվի առնելով մազութում ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, նաև նպատակահարմար է դրանց օգտագործման համար շեղումներ սահմանել աղբի այրման այն սարքավորումներում, որոնց արտանետումների սահմանային թույլատրելի նորման համապատասխանում է «Աղբի այրման մեծ սարքավորումներից որոշ աղտոտող նյութերի արտանետումների նվազեցման մասին» Խորհրդի 1988 թվականի նոյեմբերի 24-ի 88/609/ԵՏՀ հրահանգով նախատեսված սահմանային թույլատրելի նորմային, և քանի որ 88/609/ԵՏՀ հրահանգը փոփոխելու լույսի ներքո հնարավոր է սույն Հրահանգի որոշ դրույթներ վերանայելու և, հարկ եղած դեպքում, փոփոխելու անհրաժեշտությունը,
- 17) քանի որ սույն Հրահանգի 3(3)(թ)(գ) հոդվածի շրջանակի մեջ չմտնող վերամշակման գործարանների համար նման սարքավորումներից ծծմբի երկօքսիդի

արտանետումների միջին քանակը չպետք է գերազանցի 88/609/ԵՏՀ հրահանգում կամ այդ հրահանգի հետագա վերանայված տարբերակներում նշված սահմանային թույլատրելի նորմաները. և քանի որ սույն Հրահանգի կիրառման ընթացքում անդամ պետությունները պետք է հաշվի առնեն, որ փոխարինումն այնպիսի վառելիքներով, որոնք նշված չեն 2-րդ հոդվածում, չպետք է բերի թթվեցում առաջացնող՝ աղտոտող նյութերի արտանետումների աճին,

- 18) քանի որ, 93/12/ԵՏՀ հրահանգի համաձայն, նավթաթորվածքում ծծմբի սահմանային թույլատրելի 0,2% կոնցենտրացիան արդեն սահմանվել է. և քանի որ այդ կոնցենտրացիան մինչև 2008 թվականի հունվարի 1-ը պետք է վերափոխվի 0,1%-ի,
- 19) քանի որ, համաձայն 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտի, Ավստրիան և Ֆինլանդիան 4 տարի ժամկետով դրույթների կատարումից շեղման իրավունք ունեն՝ սկսած անդամակցության օրվանից՝ կապված «Նավթաթորվածքում ծծմբի կոնցենտրացիայի մասին» 93/12/ԵՏՀ հրահանգի դրույթների հետ,
- 20) քանի որ ծովային նավերում օգտագործվող նավթաթորվածքում ծծմբի 0,2% (2000 թվական) և 0,1% (2008 թվական) սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները կարող են տեխնիկական և տնտեսական խնդիրներ առաջացնել Հունաստանի համար՝ երկրի ամբողջ տարածքում, Իսպանիայի համար՝ կապված Կանարյան կղզիների հետ, Ֆրանսիայի համար՝ կապված Ֆրանսիայի արտասահմանյան գերատեսչությունների և Պորտուգալիայի համար՝ Մադեյրա ու Ազորես կղզիախմբերի հետ. քանի որ Հունաստանի, Կանարյան կղզիների, Ֆրանսիայի արտասահմանյան գերատեսչությունների և Մադեյրա ու Ազորես կղզիախմբերի համար շեղումները չպետք է բացասաբար ազդեն նավթաթորվածքների շուկայի վրա, և քանի որ Հունաստանը, Կանարյան կղզիները, Ֆրանսիայի արտասահմանյան գերատեսչությունները և Մադեյրա ու Ազորես կղզիախմբերը պետք է բավարարեն ներմուծող անդամ պետության գործող պահանջները, և քանի որ Հունաստանին, Կանարյան կղզիներին, Ֆրանսիայի արտասահմանյան գերատեսչություններին և Մադեյրա ու Ազորես կղզիախմբերին պետք է, հետևաբար, նավերում օգտագործվող նավթաթորվածքների համար նախատեսված ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից շեղման թույլտվություն տրվի,

- 21) քանի որ նավարկությունների ժամանակ ծծմբի արտանետումները, որոնք պայմանավորված են նավերում ծծմբի բարձր կոնցենտրացիայով վառելիքների այրմամբ, նպաստում են ծծմբի երկօքսիդով մթնոլորտի աղտոտմանը և թթվեցման խնդիրների առաջացմանը. և քանի որ Համայնքը նպաստելու է ծծմբի երկօքսիդի արտանետումների ազդեցությանը ենթակա տարածքների առավել արդյունավետ պաշտպանությանն ու նավերում օգտագործվող մագուիթ ներկա կոնցենտրացիայի կրճատմանը (ներկայիս 4,5%-ից) Միջազգային ծովային կազմակերպության հետ ՄԱՐՓՈԼ (Ծովային աղտոտում) կոնվենցիայի շուրջ ընթացող և հետագա բանակցությունների ժամանակ,
- 22) քանի որ անհրաժեշտ են էկոհամակարգերի և մարդու մարմնի վրա թթվեցման ազդեցությունների առավել խորը ուսումնասիրություններ. քանի որ Հանձնաժողովը նպաստում է շրջակա միջավայրի մասին նման ուսումնասիրություններին՝ հետազոտական շրջանակային 5-րդ ծրագրի համաձայն,
- 23) քանի որ չմշակված նավթի, նավթամթերքի և այլ ածխաջրածինների մատակարարումը խափանվելու դեպքում Հանձնաժողովը կարող է թույլ տալ անդամ պետության տարածքում առավել բարձր կոնցենտրացիայի կիրառում,
- 24) քանի որ անդամ պետությունները պետք է ստեղծեն համապատասխան մեխանիզմներ՝ սույն Հրահանգի դրույթների կատարումը դիտանցելու նպատակով, և քանի որ հեղուկ վառելիքներում ծծմբի կոնցենտրացիայի մասին զեկույցները պետք է ներկայացվեն Հանձնաժողով,
- 25) քանի որ հստակության նկատառումներով անհրաժեշտ կլինի փոփոխել 93/12/ԵՏՀ հրահանգը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

## Հոդված 1

### Նպատակն ու գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգի նպատակը որոշ հեղուկ վառելիքների այրումից առաջացող ծծմբի երկօքսիդի արտանետումները նվազեցնելն է՝ դրանով իսկ նվազեցնելով նման արտանետումների բացասական ազդեցությունները մարդու և շրջակա միջավայրի վրա:

#### ▼M2

2. Որոշ հեղուկ նավթային վառելիքների այրումից առաջացող ծծմբի երկօքսիդի արտանետումների նվազեցումը պետք է իրականացվի՝ նման վառելիքներում ծծմբի երկօքսիդի սահմանային թույլատրելի կոնցենտրացիա սահմանելու միջոցով՝ որպես դրանց օգտագործման պայման անդամ պետության տարածքում, տերիտորիալ ջրերում և բացառիկ տնտեսական գոտիներում կամ աղտոտման վերահսկման գոտիներում:

Որոշ հեղուկ նավթային վառելիքներում ծծմբի՝սույն Հրահանգով նախատեսված սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, այնուամենայնիվ, չի կիրառվում՝

- ա) հետազոտությունների և փորձարկման նպատակների համար նախատեսված վառելիքների նկատմամբ.
- բ) վերջնական այրումից առաջ վերամշակման համար նախատեսված վառելիքների նկատմամբ.
- գ) այն վառելիքների նկատմամբ, որոնք պետք է վերամշակման ենթարկվեն զտման գործարաններում.
- դ) այն վառելիքների նկատմամբ, որոնք օգտագործվում են և շուկա են արտահանվել Համայնքի հեռավոր շրջաններում, եթե համապատասխան անդամ պետություններն ապահովում են, որ՝
  - հաշվի են առնված օդի որակի չափորոշիչները.
  - մազուրջ չի օգտագործվում, եթե դրանում ծծմբի կոնցենտրացիան գերազանցում է 3%-ը՝ ըստ զանգվածի.
- զ) այն վառելիքների նկատմամբ, որոնք զինվորական ծառայության ժամանակ օգտագործվում են ռազմական նավերում: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր անդամ



պետություն, ընդունելով նման նավերի գործունեությունը կամ գործառական կարողությունները չսահմանափակող միջոցներ, պետք է ձգտի ապահովել, որ այս նավերի գործունեությունը, հնարավորության և իրագործելիության սահմաններում, իրականացվում է սույն Հրահանգին համապատասխան կարգով.

է) այն դեպքերում, երբ վառելիքը նավում օգտագործվում է՝ նավի վրա անվտանգությունն ապահովելու կամ ծովում փրկարարական որոշակի նպատակներով.

ը) այն դեպքերում, երբ վառելիքը նավում օգտագործվում է, քանի որ նավին կամ նավի սարքավորմանը վնաս է հասցվել, եթե պատճառված վնասից հետո ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները՝ մեծ քանակությամբ արտանետումները կանխելու կամ դրանք նվազեցնելու ուղղությամբ, և եթե հնարավորինս շուտ միջոցներ են ձեռնարկվում՝ հասցված վնասը վերականգնելու ուղղությամբ: Սա չի կիրառվում, եթե նավի սեփականատերը կամ նավապետը գործել են անզգուշաբար կամ ցանկացել են վնաս հասցնել.

թ) այն նավերում օգտագործվող վառելիքների նկատմամբ, որոնք ապահովված են արտանետումները նվազեցնող տեխնոլոգիաներով՝ համաձայն 4(գ) հոդվածի:

## ▼B

### Հոդված 2

#### Հասկացությունները

Սույն Հրահանգի իմաստով՝

1. *Մազութ* նշանակում է՝

## ▼M2

- ՀԱ 2710 19 51 կամ 2710 19 69 ծածկագրերին դասվող ցանկացած հեղուկ նավթային վառելիք՝ բացառությամբ նավերում օգտագործվող վառելիքի, կամ

## ▼B

- ցանկացած հեղուկ նավթային վառելիք՝ բացառությամբ, 2-րդ և 3-րդ կետերում նշված նավթաթորվածքների, որոնք թորման սահմանափակումների պատճառով պատկանում են որպես վառելիք օգտագործվող մազութի դասին, որի 65%-ն ըստ

ծավալի (ներառյալ կորուստները) թորման է ենթարկվում 250 օC ASTM (ԱՍՍՍ) D86 մեթոդով: Եթե թորումը չի կարող որոշվել D86 մեթոդով, նավթամթերքը նույնպես պատկանում է մագուրի դասին:

2. *Նավթաթորվածք* նշանակում է՝

- ՀԱ 2710 19 25, 2710 19 29, 2710 19 45 կամ 2710 19 49 ծածկագրերին դասվող ցանկացած հեղուկ նավթային վառելիք՝ բացառությամբ նավերում օգտագործվող վառելիքի, կամ
- բացառությամբ նավերում օգտագործվող վառելիքի՝ ցանկացած հեղուկ նավթային վառելիք, որը 65 %-ից ավելի քիչ՝ ըստ ծավալի (ներառյալ կորուստները), թորման է ենթարկվում 250 օC-ում, և որի 85 %-ը՝ ըստ ծավալի (ներառյալ կորուստները), թորման է ենթարկվում 350 օC-ում՝ ըստ ԱՍՍՍ D86 մեթոդի:

Դիզելային վառելիքները, համաձայն Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հոկտեմբերի 13-ի «Բենզինի և դիզելային վառելիքների որակի մասին» և 93/12/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ 98/10/ԵՀ հրահանգի 2(2) հոդվածի, չեն ներառվում սույն սահմանման մեջ: Ոչ ճանապարհային տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական տրակտորների մեջ օգտագործվող վառելիքները չեն ներառվում սույն սահմանման մեջ:

▼M4

3. *Նավերում օգտագործվող վառելիք* նշանակում է ցանկացած հեղուկ նավթային վառելիք, որը նախատեսված է նավերում օգտագործման համար՝ ներառյալ այն վառելիքները, որոնք սահմանված են ISO 8217 ստանդարտում: Այն ներառում է ցանկացած հեղուկ նավթային վառելիք, որն օգտագործվում է ներքին ջրային ուղիների նավերում կամ զբոսաշրջային նավերում, համաձայն Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 16-ի «Ոչ ճանապարհային տրանսպորտային միջոցների ներքին այրման շարժիչներից արտանետվող գազանման ու աէրոզոլային թափոնների դեմ ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» 97/68/ԵՀ հրահանգով և Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 1994 թվականի հունիսի 16-ի «Զբոսաշրջային նավերի մասին անդամ պետությունների օրենքների,

կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին» 94/25/ԵՀ հրահանգով, եթե բաց ծովում նման նավեր կան.

## ▼M2

- 3(ա). *Նավերում օգտագործվող դիզելային վառելիք* նշանակում է նավերում օգտագործվող ցանկացած վառելիք, որի մածուցիկությունը և խտությունը ISO 8217 աղյուսակի DMB և DMC կարգերի համար նախատեսված մածուցիկության և խտության սահմաններում են.
- 3(բ). *Նավերում օգտագործվող նավթաթորվածք* նշանակում է նավերում օգտագործվող ցանկացած վառելիք, որի մածուցիկությունը և խտությունը ISO 8217 աղյուսակի DMB և DMC կարգերի համար նախատեսված մածուցիկության ու խտության սահմաններում են.
- 3(գ). *ՄԱՐՓՈԼ* (Ծովի աղտոտում) նշանակում է «Նավերից աղտոտող նյութերի արտանետումների կանխման մասին» 1973 թվականի միջազգային կոնվենցիա՝ փոփոխված դրան կից 1978 թվականի արձանագրությամբ.
- 3(դ). *ՄԱՐՓՈԼ-ի VI հավելված* նշանակում է «Նավերից աղտոտող նյութերի արտանետումների կանխման կանոնակարգեր» վերնագրով հավելված, որը 1997 թվականի արձանագրությամբ ավելանում է ՄԱՐՓՈԼ-ին.
- 3(ե). *ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքներ* նշանակում է այնպիսի տարածքներ, որոնք սահմանված են Միջազգային ծովային կազմակերպության կողմից՝ ՄԱՐՓՈԼ-ի VI արձանագրության համաձայն.
- 3(զ). *մարդատար նավ* նշանակում է այնպիսի նավ, որը տեղափոխում է ավելի քան 12 ուղևորներ, և ուղևորների մեջ չեն մտնում՝
- i) նավապետը և անձնակազմի անդամները, կամ նավի վրա այդ նավի համար աշխատանքի անցած կամ ցանկացած այլ կերպ նավի վրա իրականացվող աշխատանքներում ներգրավված անձ.
  - ii) մեկ տարեկանից փոքր երեխա.
- 3(է). *կանոնավոր ծառայություններ* նշանակում է նավով ուղևորների փոխադրումներ, որոնք իրականացվում են երկու կամ ավելի նավահանգիստների միջև՝

երթևեկությունն ապահովելու նպատակով, կամ ուղևորություններ նավահանգստից և դեպի այդ նույն նավահանգիստ առանց այդ ընթացքում այլ նավահանգիստներ մուտք գործելու՝

i) կա՛մ համաձայն հայտարարված/հրապարակված ժամանակացույցի.

ii) կա՛մ այնքան կանոնավոր կամ հաճախակի փոխադրումներով, որ դրանք կարող են համարվել ճանաչելի ժամանակացույց.

3(ը). *ռազմական նավ* նշանակում է որևէ պետության զինված ուժերին պատկանող նավ, որն ունի այն արտաքին նշանները, որոնցով առանձնանում է տվյալ պետության նման նավերից, և որը ղեկավարում է այն պաշտոնյան, որը պատշաճ կերպով նշանակվել է պետության կառավարության կողմից, և ում անունը կա համապատասխան ծառայողական ցուցակում, և նավը համալրված է անձնակազմով, որը զինված ուժերի կանոնավոր վերահսկողության տակ է գտնվում.

3(թ). *խարիսխ գցած նավ* նշանակում է այն նավը, որը խարիսխ է գցել Համայնքի նավահանգստում, մինչ իրականացվում է բեռնումը, բեռնաթափումը կամ ներառյալ այն ժամանակը, որի ընթացքում բեռների հետ կապված գործողություններ չեն իրականացվում.

#### ▼M4 —————

#### ▼M2

3(ժա). *շուկայահանում* նշանակում է նավերում օգտագործվող վառելիքի առաքում կամ մատչելիության ապահովում երրորդ անձանց համար, վճարի դիմաց կամ անվճար, ցանկացած վայրում՝ անդամ պետության տարածքում, որը մտնում է անդամ պետությունների իրավասության շրջանակի մեջ.

3(ժբ). *Հեռավոր շրջաններ* նշանակում է Ֆրանսիայի արտասահմանյան գերատեսչություններ, Ազորյան, Մադեյրա և Կանարյան կղզիներ՝ համաձայն Պայմանագրի 299-րդ հոդվածի.

3(ժգ). *Արտաներման նվազեցման տեխնոլոգիա* նշանակում է արտանետված գազի մաքրման համակարգ կամ ցանկացած այլ տեխնոլոգիական մեթոդ, որը ենթակա է ստուգման և կիրառման.

▼B

4. *ASTM մեթոդ* նշանակում է այնպիսի մեթոդներ, որոնք սահմանված են Փորձարկումների և նյութերի ամերիկյան միության կողմից նավթի և յուղային արտադրանքի ընդունված սահմանումների և դասակարգումների 1976 թվականի հրատարակության մեջ.
5. *աղբի այրման սարքավորում* նշանակում է ցանկացած տեխնիկական սարքավորում, որտեղ վառելիքն օքսիդացվում է՝ առաջացած ջերմային էներգիայի օգտագործման նպատակով:

▼M2 \_\_\_\_\_

▼M2

*Հոդված 3*

**Մազութում ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիա**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու համար, որ 2003 թվականի հունվարի 1-ից մազութը չի օգտագործվում, եթե դրանում ծծմբի կոնցենտրացիան գերազանցում է 1%-ը՝ ըստ զանգվածի:
2.
  1. Ենթակա լինելով արտանետումների դիտանցման՝ իրավասու մարմինների կողմից, սույն պահանջը չի կիրառվում այն մազութի նկատմամբ, որն օգտագործվում է՝
    - ա) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի «Աղբի այրման սարքավորումներից որոշ աղտոտող նյութերի արտանետումները նվազեցնելու մասին» 2001/80/ԵՀ հրահանգի շրջանակի մեջ մտնող աղբի այրման սարքավորումներում, որոնք համարվում են նոր՝ համաձայն հրահանգի 2(9) հոդվածի սահմանման, և որոնք համապատասխանում են այդ հրահանգի IV հավելվածով նման սարքավորումների համար սահմանված՝ ծծմբի երկօքսիդի արտանետումների սահմանային թույլատրելի նորմային և կիրառվում են դրա 4-րդ հոդվածի համաձայն.

բ) աղբի այրման սարքավորումներում, որոնք մտնում են 2001/80/ԵՀ հրահանգի շրջանակի մեջ, և որոնք համարվում են գործող՝ համաձայն հրահանգի 2(10) հոդվածի սահմանման, եթե աղբի այրման այս սարքավորումներից ծծմբի երկօքսիդի արտանետումները հավասար կամ պակաս են 1700 մգ/Nm<sup>3</sup>-ից չոր զանգվածով 3%՝ ըստ ծավալի վառման գազերի թթվածնի պարունակության մեջ, և եթե 2008 թվականի հունվարի 1-ից 2001/80/ԵՀ հրահանգի 4(3)(ա) հոդվածի շրջանակի մեջ մտնող աղբի այրման սարքավորումներից ծծմբի երկօքսիդի արտանետումները հավասար են կամ պակաս այն արտանետումներից, որոնք համապատասխանում են այդ հրահանգի IV հավելվածի Ա մասում նշված նոր սարքավորումներից ծծմբի երկօքսիդի արտանետումների սահմանային թույլատրելի նորմային և, անհրաժեշտության դեպքում, հրահանգի 5-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների կիրառմամբ.

գ) աղբի այրման այլ սարքավորումներում, որոնք չեն մտնում (ա) և (բ) կետերի մեջ, եթե ծծմբի երկօքսիդի արտանետումներն աղբի այրման այս սարքավորումներից չոր զանգվածով 3% ըստ ծավալի վառման գազերի թթվածնի պարունակությունում չեն գերազանցում 1700 մգ/Nm<sup>3</sup> -ը.

դ) զտման գործարաններում այրման նպատակներով, որտեղ ծծմբի երկօքսիդի արտանետումների ամսական միջին քանակը, որը կազմում է զտման գործարանի բոլոր սարքավորումներից արտանետումների միջին քանակը՝ անկախ օգտագործվող վառելիքի կամ վառելիքի խառնուրդի տեսակից, համապատասխանում է այն սահմանային թույլատրելի նորմային, որը պետք է սահմանի յուրաքանչյուր անդամ պետություն, և որը չի գերազանցում 1700 մգ/Nm<sup>3</sup>-ը: Սա չի կիրառվում այրման այն սարքավորումների նկատմամբ, որոնք մտնում են (ա) կետի մեջ կամ, սկսած 2008 թվականի հունվարի 1-ից, այն սարքավորումների նկատմամբ, որոնք մտնում են (բ) կետի մեջ:

2. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ աղբի այրման ցանկացած սարքավորում, որում օգտագործվում է 1-ին պարբերության մեջ նշված ծծմբի կոնցենտրացիայից ավելի մեծ կոնցենտրացիայով մազուի, չի շահագործվում առանց իրավասու մարմնի կողմից տրված թույլտվության, որով սահմանված են արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները:

3. 2-րդ պարբերության դրույթները պետք է վերանայվեն և, անհրաժեշտության դեպքում, փոփոխվեն՝ հաշվի առնելով 2001/80/ԵՀ հրահանգի հետագա փոփոխությունները:

▼B

#### Հոդված 4

##### **Նավթաթորվածքում ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու համար, որ նավթաթորվածքները չօգտագործվեն տվյալ պետության տարածքում՝ սկսած.

- 2000 թվականի հուլիսից, եթե դրանցում ծծմբի կոնցենտրացիան գերազանցում է 0,20 %-ը՝ ըստ զանգվածի.
- 2008 թվականի հունվարի 1-ից, եթե դրանցում ծծմբի կոնցենտրացիան գերազանցում է 0,10 %-ը՝ ըստ զանգվածի:

▼M2 \_\_\_\_\_

▼M2

#### Հոդված 4ա

##### **Ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան նավերում օգտագործվող վառելիքներում, որոնք օգտագործվում են ծծմբի երկօքսիդի վերահսկման տարածքներում և դեպի Համայնքի նավահանգիստներ կամ նավահանգիստներից կանոնավոր ծառայություններ մատուցող մարդատար նավերում**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր քայլերը՝ ապահովելու համար, որ նավերում օգտագործվող վառելիքը չի օգտագործվում տերիտորիալ ջրերում, բացառիկ տնտեսական գոտիներում և ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքների մեջ մտնող աղտոտման վերահսկման գոտիներում, եթե այդ վառելիքի մեջ ծծմբի կոնցենտրացիան գերազանցում է 1,5%-ը՝ ըստ զանգվածի: Սա կիրառվում է բոլոր դրոշների տակ նավարկող բոլոր նավերի նկատմամբ՝ ներառյալ այն նավերը, որոնց ուղևորությունն սկսվել է Համայնքի տարածքից դուրս:

2. 1-ին պարբերության կիրառման օրերն են՝

ա) ՄԱՐՓՈԼ-ի VI հավելվածի 14(3)(ա) կանոնակարգում նշված՝ Բալթիկ ծովի տարածաշրջանի համար՝ 2006 թվականի օգոստոսի 11-ը.

բ) Հյուսիսային ծովի համար՝

- սահմանված ընթացակարգերի համաձայն՝ Միջազգային ծովային կազմակերպության որոշումից 12 ամիս հետո.
- 2007 թվականի օգոստոսի 11-ը.

այս երկու օրվանից այն օրը, որն ավելի շուտ է.

գ) ցանկացած այլ ծովային տարածաշրջանի համար՝ ներառյալ այն նավահանգիստները, որոնք Միջազգային ծովային կազմակերպությունը սահմանում է որպես ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածք՝ համաձայն ՄԱՐՓՈԼ-ի VI հավելվածի 14(3)(ա) կանոնակարգի: Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 12 ամիս հետո:

3. Անդամ պետությունները պատասխանատու են 1-ին պարբերության կիրառման համար առնվազն հետևյալի մասով՝

- տվյալ պետության դրոշների տակ նավարկող նավերի, կամ
- իրենց պետության նավահանգիստներում գտնվող բոլոր դրոշների տակ նավարկող նավերի՝ այն դեպքում, երբ անդամ պետությունը սահմանակցում է ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքներին:

Անդամ պետությունները կարող են ձեռնարկել հավելյալ հարկադրական միջոցներ այլ նավերի նկատմամբ՝ համաձայն միջազգային ծովային իրավունքի:

4. Սկսած 2(ա) պարբերության մեջ նշված օրվանից՝ անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ նավերում գործածվող վառելիքը չի օգտագործվում իրենց պետության տերիտորիալ ջրերում, բացառիկ տնտեսական գոտիներում և աղտոտման վերահսկման գոտիներում նավարկող մարդատար նավերում, որոնք կանոնավոր ծառայություններ են մատուցում Համայնքի նավահանգիստներից կամ դեպի այդ նավահանգիստներ, եթե այդ վառելիքում ծծմբի կոնցենտրացիան գերազանցում է 1,5%-ը՝ ըստ զանգվածի: Անդամ պետությունները պատասխանատու են սույն պահանջի կատարման համար առնվազն տվյալ պետության



դրոշների տակ նավարկող նավերի և այդ պետության նավահանգիստներում գտնվելու ընթացքում բոլոր դրոշների տակ նավարկող նավերի մասով:

5. 2(ա) պարբերության մեջ նշված օրվանից անդամ պետությունները պետք է պահանջեն նավերի գրանցամատյանների ճշգրիտ լրացում՝ սահմանելով վառելիքը փոխելը որպես նավերի համար Համայնքի նավահանգիստներ մտնելու պայման:

6. 2(ա) պարբերության մեջ նշված օրվանից և համաձայն ՄԱՐՓՈԼ-ի VI հավելվածի 14(3)(ա) կանոնակարգի՝ անդամ պետությունները՝

- գրանցում են նավերում օգտագործվող վառելիքի տեղական մատակարարողներին.
- ապահովում են, որ ծծմբի կոնցենտրացիան նավերում օգտագործվող այն վառելիքներում, որոնք վաճառվում են իրենց պետության տարածքում, մատակարարողի կողմից նշվում է վառելիքի մատակարարման պայմանագրում, որին կցվում է վառելիքն ստացող նավի ներկայացուցչի կողմից ստորագրված ու կնքված օրինակը.
- ձեռնարկում են համապատասխան գործողություններ նավերում օգտագործվող վառելիքի այն մատակարարների դեմ, ովքեր մատակարարել են այնպիսի վառելիք, որը չի համապատասխանում վառելիքի մատակարարման պայմանագրում նշված բնութագրին.
- ապահովում են համապատասխան իրավապաշտպան գործողությունների ձեռնարկումը՝ հայտնաբերված ոչ համապատասխան վառելիքի համապատասխանությունն ապահովելու համար:

7. 2(ա) պարբերության նշված օրվանից անդամ պետություններն ապահովում են, որ նավերում օգտագործվող դիզելային վառելիքները շուկա չեն արտահանվում իրենց պետության տարածքում, եթե նավերում օգտագործվող դիզելային այդ վառելիքներում ծծմբի կոնցենտրացիան գերազանցում 1,5%-ը՝ ըստ զանգվածի:

8. Հանձնաժողովն անդամ պետություններին տեղեկացնում է 2(բ) պարբերության մեջ նշված կիրառման օրերի մասին և դրանք հրապարակում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

▼M4

**Համայնքի նավահանգիստներում խարիսխ գցած նավերում օգտագործվող վառելիքներում ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան**

▼M2

1. 2010 թվականի հունվարի 1-ից անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ հետևյալ նավերում չեն օգտագործվում այնպիսի վառելիքներ, որոնցում ծծմբի կոնցենտրացիան գերազանցում է 0,1 %-ը՝ ըստ զանգվածի՝

▼M4 \_\_\_\_\_

▼M2

բ) Համայնքի նավահանգիստներում խարիսխ գցած նավերում՝ հատկացնելով բավարար ժամանակ, որպեսզի անձնակազմը վերջացնի վառելիքը փոխելու գործողությունները հնարավորինս շուտ նավամատույց հասնելուց հետո և հնարավորինս ուշ՝ մեկնումից առաջ:

Անդամ պետություններ պետք է պահանջեն վառելիքը փոխելու ցանկացած գործողության ժամանակը գրանցել նավի գրանցամատյաններում:

2. 1-ին պարբերությունը չի կիրառվում.

ա) այն դեպքում, երբ նավերը, համաձայն հայտարարված ժամանակացույցների, նավամատույցում պետք է 2 ժամից պակաս մնան.

▼M4 \_\_\_\_\_

▼M2

գ) մինչև 2012 թվականի հունվարի 1-ը այն նավերի նկատմամբ, որոնք թվարկված են հավելվածում և նավարկում են բացառապես Հունաստանի տարածքում.

դ) այն նավերի նկատմամբ, որոնք նավահանգիստներում գտնվելու ժամանակ անջատում են բոլոր շարժիչները և օգտվում են առափնյա էլեկտրականությունից:

3. 2010 թվականի հունվարի 1-ից անդամ պետություններն ապահովում են, որ նավերում օգտագործվող նավթաթորվածքները չեն շուկայահանվում իրենց պետության տարածքում, եթե այդ նավթաթորվածքներում ծծմբի կոնցենտրացիան գերազանցում է 0,1 %-ը՝ ըստ զանգվածի:

#### *Հոդված 4գ*

### **Փորձարկումները և արտանետումների նվազեցման նոր տեխնոլոգիաների կիրառումը**

1. Անդամ պետությունները կարող են, համագործակցելով այլ անդամ պետությունների հետ, անհրաժեշտության դեպքում, նավերից արտանետումների նվազեցման տեխնոլոգիաների փորձարկումներ թույլ տալ՝ տվյալ պետության դրոշի տակ նավարկող նավերի վրա կամ իրենց իրավասության տակ գտնվող ծովային տարածքներում: Այս փորձարկումների ժամանակ 4(ա) և 4(բ) հոդվածների պահանջները բավարարող վառելիքի օգտագործումը պարտադիր չէ, եթե՝

- Հանձնաժողովին և համապատասխան նավահանգստային պետությանը գրավոր տեղեկացնում են փորձարկումների մեկնարկից առնվազն վեց ամիս առաջ.
- փորձարկումների տևողությունը չի գերազանցում 18 ամիսը.
- ներգրավված բոլոր նավերն ապահովված են գազի արտանետումների մշտական վերահսկման սարքավորմամբ, որն օգտագործվում է փորձարկման ամբողջ ընթացքում.
- բոլոր ներգրավված նավերն իրականացնում են արտանետումների կրճատումներ, որոնք առնվազն համապատասխանում են այն կրճատումներին, որոնք կիրառվեն վառելիքում ծծմբի՝ սույն Հրահանգում նշված սահմանային թույլատրելի նորմաների կիրառման միջոցով.
- կան թափոնների վերահսկման պատշաճ համակարգեր՝ արտանետումների նվազեցման տեխնոլոգիաների փորձարկման շրջանի ընթացքում առաջացած բոլոր թափոնների համար.

- փորձարկումների ամբողջ շրջանի ընթացքում իրականացվում է ծովային շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատում, մասնավորապես՝ փակ նավահանգիստների, նավակայանների ու գետաբերանների էկոհամակարգերի վրա, և
- վերջնական արդյունքները տրամադրվում են Հանձնաժողովին և մատչելի են դարձվում հանրությանը փորձարկումների շրջանի ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:

2. Անդամ պետության դրոշի տակ նավարկող նավերի համար արտանետումների նվազեցման տեխնոլոգիաները հաստատվում են անվտանգ ջրերի և նավերից արտանետումների կանխման հարցերով կոմիտե ստեղծող՝Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 2099/2002 կանոնակարգի (ԵՀ) 3(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն՝ հաշվի առնելով՝

- այն ուղեցույցները, որոնք պետք է մշակվեն Միջազգային ծովային կազմակերպության կողմից.
- 1-ին պարբերության համաձայն իրականացված փորձարկումների արդյունքները.
- շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ ներառյալ արտանետումների հնարավոր կրճատումները, և ազդեցությունները փակ նավահանգիստների, նավակայանների ու գետաբերանների էկոհամակարգերի վրա.
- դիտանցման և ստուգման իրագործելիությունը:

### ▼M3

3. Բոլոր դրոշների տակ նավարկող նավերում արտանետման նվազեցման տեխնոլոգիաների օգտագործման չափանիշները սահմանվում են Հանձնաժողովի կողմից: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 9(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: Հանձնաժողովն այս չափանիշների մասին տեղեկացնում է Միջազգային ծովային կազմակերպությանը:

### ▼M2

4. Որպես 4(ա) և 4(բ) հոդվածներով սահմանված պահանջները բավարարող ծծմբի ցածր կոնցենտրացիայով վառելիքի այլընտրանք՝ անդամ պետությունները կարող են թույլ տալ նավերին օգտագործել արտանետումների նվազեցման տեխնոլոգիա՝ պայմանով, որ այս նավերը՝

- անընդհատ արտանետումների կրճատումներ են իրականացնում, որոնք առնվազն համապատասխանում են այն կրճատումներին, որոնք կիրառործվեն վառելիքում ծծմբի՝ սույն Հրահանգով սահմանված սահմանային թույլատրելի նորմաների կիրառման միջոցով.
- ապահովված են արտանետումների մշտական վերահսկման սարքավորումներով, և
- արձանագրում են, որ փակ նավահանգիստներ, նավակայաններ և գետաբերաններ արտանետված թափոնները ոչ մի ազդեցություն չունեն էկոհամակարգերի վրա՝ հիմնվելով նավահանգստային պետությունների իշխանությունների կողմից Միջազգային ծովային կազմակերպությանը ներկայացրած չափորոշիչների վրա:

▼B

*Հոդված 5*

**Վառելիքի մատակարարման գործում փոփոխություններ**

Եթե չմշակված նավթի, նավթամթերքի կամ այլ ածխաջրածինների մատակարարման գործում չնախատեսված փոփոխության հետևանքով անդամ պետության համար անհնար է դառնում կիրառել ծծմբի՝ 3-րդ և 4-րդ հոդվածներում նշված սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի նորմատիվները, այդ անդամ պետությունը դրա մասին տեղեկացնում է Հանձնաժողովին: Հանձնաժողովը կարող է թույլ տալ այդ անդամ պետության տարածքում վեց ամսից ոչ ավելի ժամկետի ընթացքում կիրառել ավելի մեծ սահմանային թույլատրելի նորմա. այն իր որոշման մասին տեղեկացնում է Խորհրդին և անդամ պետություններին: Ցանկացած անդամ պետություն կարող է մեկ ամսվա ընթացքում այդ որոշման մասին տեղեկացնել Խորհրդին: Խորհուրդը, գործելով որակյալ մեծամասնությամբ, կարող է երկու ամսվա ընթացքում մեկ այլ որոշում ընդունել:

## Հոդված 6

### Նմուշառում և հետազոտություն

1. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նմուշառման միջոցով ստուգելու համար, թե արդյոք օգտագործվող վառելիքներում ծծմբի կոնցենտրացիան համապատասխանում է 3-րդ և 4-րդ հոդվածներին: Նմուշառումն սկսվում է վառելիքում ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի համապատասխան նորմատիվներն ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո: Այն իրականացվում է բավարար հաճախականությամբ և այնպես, որ նմուշները ճշգրտորեն ներկայացնեն ստուգվող վառելիքը:

#### ▼M2

1(ա). Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար նավերում օգտագործվող վառելիքում ծծմբի կոնցենտրացիայի համապատասխանելը 4(ա) և 4(բ) հոդվածների համապատասխան դրույթներին:

Պետք է կիրառվեն, համապատասխանաբար, նմուշառման, վերլուծության և ստուգման հետևյալ ձևերից յուրաքանչյուրը՝

- նավերին մատակարարելու ընթացքում նավերի համար օգտագործվող վառելիքի նմուշառում՝ հետևելով Միջազգային ծովային կազմակերպության ուղեցույցներին, և դրանում ծծմբի կոնցենտրացիայի վերլուծություն.
- անհրաժեշտության դեպքում, նավերի վրա ցիստեռններում պահվող՝ նավերում օգտագործվող վառելիքում ծծմբի կոնցենտրացիայի նմուշառում և վերլուծություն,
- նավի գրանցամատյանի և վառելիքի մատակարարման պայմանագրերի ստուգում.

#### ▼M4

Նմուշառումն սկսվում է վառելիքում ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի նորմատիվներն ուժի մեջ մտնելու օրը: Այն իրականացվում է բավարար հաճախականությամբ, բավարար չափաքանակներով և այնպես, որ նմուշները ճշգրիտ ներկայացնեն ստուգվող վառելիքը և այն վառելիքը, որը օգտագործվում է համապատասխան ծովային տարածքներում ու նավահանգիստներում գտնվող նավերում:

## ▼M2

Անդամ պետությունները նաև ձեռնարկում են համապատասխան միջոցներ, անհրաժեշտության դեպքում, դիտանցելու ծծմբի կոնցենտրացիան նավերում օգտագործվող այն վառելիքներում, որոնց նկատմամբ չեն կիրառվում 4(ա) և 4(բ) հոդվածները:

## ▼B

2. Ռեֆերենցիալ մեթոդը, որն ընդունվել է ծծմբի կոնցենտրացիան որոշելու համար, բնորոշվում է՝

## ▼M2

ա) մազութի և նավերում օգտագործվող վառելիքների համար՝ ISO 8754 (1992) մեթոդով և PrEN ISO 14596 մեթոդով.

## ▼B

բ) նավթաթորվածքների համար՝ EN 24260 (1987) մեթոդով, ISO 8754 (1992) և PrEN ISO 14596 մեթոդով:

Արբիտրաժային մեթոդը PrEN ISO 14596 մեթոդն է: Օգտագործվող նավթաթորվածքներում ծծմբի կոնցենտրացիայի ստուգման վիճակագրական մեկնաբանությունն իրականացվում է ISO 4259(1992) ստանդարտի համաձայն:

## ▼M2

### *Հոդված 7*

#### **Հաշվետվություն և վերանայում**

1. 6-րդ հոդվածի համաձայն իրականացված նմուշառման, վերլուծության և ստուգումների արդյունքների հիման վրա անդամ պետություններն ամեն տարի մինչև հունիսի 30-ը Հանձնաժողով են ներկայացնում կարճ հաշվետվություն՝ սույն Հրահանգի շրջանակի մեջ մտնող և իրենց պետության տարածքում նախորդ օրացուցային տարվա ընթացքում օգտագործված վառելիքներում ծծմբի կոնցենտրացիայի մասին: Հաշվետվության մեջ պետք է տվյալներ ներառվեն ըստ վառելիքի տեսակի փորձարկված նմուշների ընդհանուր քանակի մասին, և դրա մեջ պետք է նշվեն օգտագործված

վառելիքի համապատասխան քանակը և ծծմբի՝ հաշվարկված միջին կոնցենտրացիան: Անդամ պետությունները նաև հաշվետվություն են ներկայացնում նավերում իրականացված ստուգումների մասին և գրանցում ծծմբի միջին կոնցենտրացիան իրենց պետության տարածքում օգտագործված այն վառելիքներում, որոնք չեն մտնում սույն Հրահանգի շրջանակի մեջ:

## 2. Հիմնվելով, մասնավորապես՝

- ա) 1-ին պարբերության համաձայն ներկայացված տարեկան հաշվետվությունների վրա.
- բ) օդի որակի, թթվեցման, վառելիքի գների և տարբեր տրանսպորտային միջոցների միջև բեռների վերաբաշխման վրա.
- գ) հետևելով Համայնքի նախաձեռնություններին՝ Միջազգային ծովային կազմակերպության մեխանիզմների միջոցով նավերից ծծմբի երկօքսիդի արտանետումների նվազեցման առաջընթացի վրա.
- դ) 4ա (4) հոդվածում նշված միջոցների և արտանետումների նվազեցման հնարավոր հետագա միջոցների տնտեսապես արդյունավետ նոր վերլուծության վրա՝ ներառյալ անմիջական և ոչ անմիջական բնապահպանական օգուտները.
- ե) 4(գ) հոդվածի իրականացման վրա.

Հանձնաժողովը մինչև 2008 թվականը հաշվետվություն է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ:

Հանձնաժողովը կարող է հաշվետվության հետ սույն Հրահանգը փոփոխելու առաջարկներ ներկայացնել, մասնավորապես՝

- ծծմբի՝ վառելիքի յուրաքանչյուր տեսակի համար սահմանված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների 2-րդ փուլի վերաբերյալ, և
- հաշվի առնելով Միջազգային ծովային կազմակերպության աշխատանքները՝ այն ծովային տարածքների վերաբերյալ, որտեղ պետք է օգտագործվեն ծծմբի ցածր կոնցենտրացիայով վառելիքներ:

Հանձնաժողովը, մասնավորապես, քննարկում է այն առաջարկները, որոնք վերաբերում են՝



ա) ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման հավելյալ տարածքների սահմանմանը.

բ) ծծմբի երկօքսիդի արտանետումների վերահսկման տարածքում օգտագործվող վառելիքներում ծծմբի կոնցենտրացիայի կրճատմանը մինչև 0.5%.

գ) այլընտրանքային կամ լրացուցիչ միջոցներին:

3. Մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հաշվետվություն է ներկայացնում տնտեսական գործիքների հնարավոր օգտագործման մասին՝ ներառյալ այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են տարբերակված տուրքերը և գանձումներն ըստ կիլոմետրի, վաճառքի իրավունքով արտանետումների արտոնագրերը և վնասների փոխհատուցումը:

Հանձնաժողովը կարող է 2008 թվականի վերանայման համատեքստում նախատեսել տնտեսական գործիքների մասին առաջարկների ընդունում՝ որպես այլընտրանքային կամ լրացուցիչ միջոցներ՝ պայմանով, որ հստակորեն ներկայացվեն շրջակա միջավայրի և առողջության հետ կապված օգուտները:

### ▼M3

4. Գիտական և տեխնիկական առաջընթացի լույսի ներքո՝ 2-րդ հոդվածին, 1-ին, 2-րդ, 3-րդ, 3ա և 4-րդ կետերին կամ 6(2) հոդվածին տեխնիկական հարմարեցումներն անելու համար անհրաժեշտ ցանկացած փոփոխություն ընդունում է Հանձնաժողովը: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 9(2ա) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: Նման հարմարեցումները չպետք է որևէ անմիջական ազդեցություն ունենան սույն Հրահանգի շրջանակի կամ սույն Հրահանգում նշված վառելիքներում ծծմբի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների վրա:

### ▼B

## Հոդված 8

### Փոփոխություններ 93/12/ԵՏՀ հրահանգում

1. 93/12/ԵՏՀ հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 1-ին հոդվածից հանել 1(ա) և 2 պարբերությունները.

բ) 2-րդ հոդվածից հանել 2-րդ պարբերության 1-ին ենթապարբերությունը և 3-րդ պարբերությունը.

գ) հանել 3-րդ և 4-րդ հոդվածները:

2. 1-ին պարբերությունը կիրառվում է 2000 թվականի հուլիսի 1-ից:

### ▼M3

#### *Հոդված 9*

#### **Կոմիտեի ընթացակարգը**

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածը և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

### ▼B

#### *Հոդված 10*

#### **Փոխատեղումը**

Անդամ պետությունները մինչև 2000թ. հուլիսի 1-ը գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այս ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ իրենց պաշտոնական հրապարակման պահին ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու կարգը հաստատվում է անդամ պետությունների կողմից:

Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային օրենսդրության դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

## Հոդված 11

### **Պատժամիջոցները**

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգին համապատասխան ընդունված ազգային դրույթների խախտման համար կիրառելի պատժամիջոցները: Պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ:

## Հոդված 12

### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելու օրվանից:

## Հոդված 13

### **Հասցեատերերը**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

## ՀԱՎԵԼՎԱԾ

## ՀՈՒՆԱԿԱՆ ՆԱՎԵՐԸ

ՆԱՎԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԱՐԻՆ	ՄԾԿ թիվ
ARIADNEPALACE	2002	9221310
IKARUSPALACE	1997	9144811
KNOSSOSPALACE	2001	9204063
OLYMPIAPALACE	2001	9220330
PASIPHAEPALACE	1997	9161948
FESTOSPALACE	2001	9204568
EUROPAPALACE	2002	9220342
BLUESTAR I	2000	9197105
BLUESTAR II	2000	9207584
BLUE STAR ITHAKI	1999	9203916
BLUE STAR NAXOS	2002	9241786
BLUE STAR PAROS	2002	9241774
HELLENIC SPIRIT	2001	9216030
OLYMPIC CHAMPION	2000	9216028
LEFKAORI	1991	9035876
SOPHOKLISVENIZELOS	1990	8916607

- 
- (1) ՊՏ C 190, 21.06.1997թ., էջ 9 և ՊՏ C 259, 18.08.1998թ., էջ 5:
- (2) ՊՏ C 355, 21.11.1997թ., էջ 1:
- (3) Եվրոպական պառլամենտի 1998 թվականի մայիսի 13-ի եզրակացություն (ՊՏ C 167, 01.06.1998թ., էջ 111), Խորհրդի 1998 թվականի հոկտեմբերի 6-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 364, 25.11.1998թ., էջ 20) և Եվրոպական պառլամենտի 1999 թվականի փետրվարի 9-ի որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):
- (4) ՊՏ C 138, 17.05.1993թ., էջ 5:
- (5) ՊՏ L 74, 27.03.1993թ., էջ 81:
- ( 6 ) ՊՏ L 109, 26.04.1983թ., էջ 8: Հանձնաժողովի թիվ 96/139/ԵՀ որոշմամբ (ՊՏ L 32, 10.02.1996թ., էջ 31) վերջին անգամ փոփոխված հրահանգ:
- (7) ՊՏ L 336, 07.12.1988թ., էջ 1: Վերջին անգամ 94/66/ԵՀ հրահանգով (ՊՏ L 337, 24.12.1994թ., էջ 83)փոփոխված հրահանգ:
- (8) ՊՏ L 26, 01.02.1999թ., էջ 1:
- (9) ՊՏ L 350, 28.12.1998թ., էջ 58:
- (10) ՊՏ L 59, 27.02.1998թ., էջ 1:
- (11) ՊՏ L 164, 30.06.1994թ., էջ 15:
- (12) ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 1: Վերջին անգամ 2003 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված հրահանգ:
- (13) ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1: Հանձնաժողովի թիվ 415/2004 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 68, 06.03.2004թ., էջ 10):